

ըստ միջնորդութեան Գեր. Առաջնորդի վիճակին: 5 սեպտեմբ.

\* \*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1536, յանուն Կարապետ քահանայի Տէր Գրանիէլեան, անդամոյ Կոնսիստորիային Արցախու, որով շնորհէ նմա իրաւունս կրել խաչ սակեղօծ, ըստ միջնորդութեան Գեր. Առաջնորդի վիճակին: 5 սեպտ.

\* \*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1541 յանուն Արսէն վարդապետի Ղլտճեան, որով կարգէ զնա ի պաշտօն յաջորդութեան վիճակին Հին Կաթիլեանի, ի տեղի Գրիգորիս վարդապետի Տէր Յակոբեան: 5 սեպտեմբ.

\* \*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1552 յանուն Գրիգոր քահանայի Գրիգորեան ի Բագու, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի դուխն զգլխարկն թաւշեայ «կամիլաւկա» անունեան, ըստ միջնորդութեան Առաջնորդին Շամսիւոյ Գեր. Մեսրոպ Աբեղյանի սկոպոսի: 6 սեպտեմբ.

\* \*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1553, յանուն Տաճատ քահանայի Մարաղեան ի Շամախի, որով շնորհէ նմա իրաւունս կրել խաչ սակեղօծ, ըստ միջնորդութեան Գեր. Առաջնորդին: 6 սեպտեմբ.

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1554, յանուն Արսէն քահանայի Բաղրատունւոյ ի Շամախի, որով շնորհէ նմա իրաւունս կրել խաչ սակեղօծ, ըստ միջնորդութեան Գեր. Առաջնորդին: 6 սեպտեմբ.

ՔԱՂՈՒԱԾԻ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՄԻՆՕԳԻ

Օդոստ. 19. Սինօզը պատուիրեց Կարօի Հոգեւոր Կառավարութեան որ եթէ Կաղզուանցի Յովհաննէս քահանայ թովմասեանցը չի կամենում լսել Բարձրագոյն Հոգեւոր իշխանութեան հրամանը, որ վճռել է ապաշխարեցնել նորան երեք ամիս Կարուց դաւառի վանքերից մինում իւր անխաղաղատէր բնաւորութեան համար:

այն ժամանակ ուղարկել յիշեալ քահանային Խորվիրապի վանքը:

Օդոստ. 22. Սինօզը անցեալ տարի գեղեմեմբերի 8-ին վճռել էր լուծել Ղամարեցի Ղազար Պօղոսեանի պսակը նորա կին Խանու մի անընդունակութեան պատճառաւ այն պայմանով, որ մարդը ապահովէ լքեալ կնոջ ապրուստը: Բայց Կոնսիստորիան յայանեց թէ Ղազար Պօղոսեանը չէ կամենում բաւականութիւն տալ կնոջը ուստի Սինօզը վերստին հրամայեց թէ մինչև Ղազար Պօղոսեանը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրամանի մաքի համաձայն չապահովէ իւր կին Խանու մի ապրուստը, անհնար է նրան իրաւունք տալ ուրիշ կնոջ հետ նորից ամուսնանալու:

Օդոստ. 22. Տփլիսի Կոնսիստորիայն յայտնեց թէ Շապշակ զիւղի բնակիչ Մաթուկ Թերզեանցը հրաւիրուած էր Յովակիմ Փահլէվանեանցի հարսանիքը, այդ ժամանակ փեսայացու Յովակիմը թողնում է հարսանեաց հանգէսը և հեռանում: Հարսնացու Մարիամ Զաքրեանի բարեկամները և ծնողները պսակել են տալիս նրան վերողրեալ Մաթուկ Թերզեանցի հետ Գրիգոր քահանայ Տէր Աեփրեանցի ձեռքով: Վեց ամիս անցնելուց յետոյ առաջին փեսայացու Փահլէվանեանցը գալով զազանի փախցնում է իւր նշանած Մարիամին և տանում Չիրուխու զիւղը և այն տեղ նորա հետ պսակուում է Մլէքայէլ քահանայ թահապետեանի ձեռքով: Սինօզը հրամայեց անվաւեր համարել Մարիամ Զաքրեանի երկրորդ պսակը Յովակիմ Փահլէվանեանցի հետ իսկ Մլէքայէլ քահանային և կրկնապրսակ Մարիամ Զաքրեանին և Յովակիմ Փահլէվանեանին յանձնել քաղաքական դատասանի:

Օդոստ. 26. Ղարաբաղի Կոնսիստորիայն յայտնում է թէ Գոշոյ վանքի վանահայր Առաքել արեղան ինքնազուխ պսակել է ծախուռեցի Առաքել Տէր Բաղդասարեանին Շուշեցի

Նատալիա Մեղրուժեանցի հետ: Մինօզը քրննելով զտաւ: որ այդ պատիւը կատարուած է ազգականութեան 8-րդ աստիճանում: և ինքնազրուխ պատկազիր արեղան վախճանուել է. ուստի հրամայեց նոցա պատիւը համարել վաւերական:

Օգոստ. 26. Համախու Կոնստանտինոպոլիսի միջնորդութեան համեմատ Մինօզը թոյլ է տալիս աճուրդով վարձու տալ Սաղեանի վանքի հոգևոր և աճուրդի թերթը ուղարկել Մինօզ հաստատելու համար:

Օգոստ. 26. Տաթևի վիճակի Ալիզուլի զիւղի ժողովուրդը բողոքել էր իւրեանց Սարգիս քահանայի վերայ, որ թողնելով իւր քահանայութեան պաշտօնը՝ միշտ գնում է ֆարաշէն զիւղը նոցա հովուելու համար: Եւ երբոր Ալիզուլեցիք զուրկ մնալով հոգևոր մխիթարութիւնից՝ խնդրում են նրանից, որ իրենց ջրողնէ լքած եկեղեցու շնորքից՝ այն ժամանակ Տէր Սարգիս քահանան կշտամբում է նրանց անվայել խօսքերով: Մինօզը այս բողոքը ուղարկելով Կոնստանտինոպոլիսի պատուիրում է օրինաւոր քննութեամբ անյապաղ ստուգել այս բողոքի հանգամանքը և քննութեան արդիւնքը մատուցանել Մինօզին իւր դատողութեան հետ: Բայց Կոնստանտինոպոլիսի թէ բողոքարկու ժողովուրդը հաշտուած է իւրեանց քահանայի հետ և խնդրում է, որ այդ բողոքը մնայ առանց հետեանքի: ուստի Մինօզը հրամայեց այս գործը աւարտած համարել հաշտութեան պատճառով:

Օգոստ. 27. Մինօզը քննելով Մարմարաշէն վանքի վերատեսուչ Երեմեանց Մովսէս քահանայի տասն ամեայ գործունէութեան հաշիւը՝ հրամայեց. Մարմարաշէն վանքի (Շիրակ գաւառ) հսկողութիւնը վերստին յանձնել Մովսէս քահանային, որ նա իւր պատասխանատուութեամբ ստանայ այդ վանքի բոլոր մուտքը առանց միջամտութեան երեսփոխանի կամ ուրիշ մարդու:

Օգոստ. 27. Տաշխալա զիւղի տանուակր Պետրոս Գասպարեանը բողոքում է նոյն զիւղի ծխատէր Յովհաննէս քահանայի վերայ, թէ ձեռնամուխ է լինում աշխարհական դործերին, իւր անխաղաղասէր բարքով զրգուում է ժողովուրդը և առանց թոյլտուութեան հոգևոր իշխանութեան պատկերի խորհուրդներ է կատարում: Մինօզը Տէր Յովհաննէսին յանցաւոր չգանելով՝ հրամայեց զգուշացնել Տէր Յովհաննէսին էլ, Հոռոմոսի վանահայր գործակալին էլ, որ առաջինը չվստահանայ իւր ժողովրդի պատիւը օրհնել առանց մերձաւոր իշխանութեան զբաւոր հրամանի: Իսկ երկրորդը չվստահանայ պատկերի տուրքը առնել առանց սահմանուած կարգով ապահովագիր տալու:

Օգոստ. 29. Սրբազնագոյն և վեհափառ Հայրապետի պատուիրանի համեմատ Արժ. Սահակ Տ. վարդապետ Այվաթեանը գնաց Սպահանի Ամենափրկիչ վանքը (Պարսկաստան) ծառայութեան գործով: ուստի Մինօզը հրամայեց. Մայր Աթոռի զանձարանից փոխ տալ Սահակ վարդապետին 250 բուրլի ծանապարհածախս և պատուիրել Հնդկաստանի և Պարսկաստանի առաջնորդ Գերասպետի Եսայի Արքեպիսկոպոսին, որ այն 250 բ. հասցնէ Մայր Աթոռի զանձարանը այն թեմի արդիւնքից:

**ՅԻՉԵՑՈՒՑԻՉ.**

« Արարատ » ի անցեալ համարում էջ. 206. երկրորդ սիւնեակի 18 դ տող. « Գուք ալ ձեր գործ կերկարէք, դուք ալ ձեր փոյթիքն ունիք: Պէտք է կարճ ընել, ծանապարհը ցուցնել, մնացեալըն ինքեանք կաշխատեն », խօսքերը վերաբերում են առհասարակ բոլոր ուսուցիչներին:

